քիայէն Կափառնաում երկնցած գծին հիւսիսային կողմը, և երկրորդը կը գրաւէ անոր հարաւային մասը։

Այս պատմական և տեղագրական հակիրճ տողերէն յետոյ պիտի յիշենք Գալիլիոյ մէջ մեր Փրկչին ապրած, քարոզած և հրաշագործած տեղերուն նկարագրութեան հետ անոնց եկեղեցիները և աւանդութիւնները։

1. Նազարէթ. — Նազարէթ անուան ստուգաբանական ծագումն է Nezer որ կը նշանակէ շառաւիղ, ծաղկաբեր ծիլ և նոյն իսկ ծաղիկ։ Նազարէթ չէ յիշատակուած ո՛չ Հին Կտակարանին և ո՛չ ալ հին պատմիչներու գործերուն մէջ։ Այս ծաղիկը չփթթիր՝ բայց միայն տալու պտուղ մը որ կը լեցնէ աշխարհը և որ ինքն իսկ է «Յեսսէի արմատէն ելած ծաղիկը»։ Նազարէթ իր հռչակաւոր անունը կը պարտի այն մեծ փառքին որ իրեն վերապահուեցաւ ըլլալու այն քաղաքը ուր կ՚ապրէր Ս. Կոյսը, երբ Գաբրիէլ հրեշտակապետ աւետեց բանին Մարդեղութեան խորհուրդը և Աստուածորդւոյն ընտրեալ տեղը ուր իր երիտասարդութեան ժամանակը պիտի անցնէր մինչև 30 տարեկան հասակին։

Այն յիշատակները որ կը կապուին այս տեղւոյն և որ անբաղդատելի լուսապսակով մը կը շրջապատեն զայն, ամէնքն ալ կը վերաբերին այն Ս. ընտանիք կոչուած երկրաւոր երրորդութեան, և որոնց ամէնքն ալ ուխտաւորին հոգւոյն մէջ կ՚արթնցնեն քաղցրութեան և անխառն ուրախութեան յուզումներ։

Նազարէթ բարձր բլուրներու շրջանակի մը ստորոտը տարածուած է ամփիթատրոնի ձևով, և շրջապատուած գեղեցիկ պարտէզներով. ան ունի շնորհալի